

Քրիստինա Սողոմոնյան

ԵՊՀ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ

«Գերմաներեն լեզու» ուսումնական առարկան ունի երկու հիմնական նպատակ: Առաջինը՝ օտար լեզվով հաղորդակցվելու կարողությունն է, երկրորդը՝ գերմաներեն լեզվի ինքնուրույն ուսումնասիրության ունակության ձևավորումն ու դաստիարակումը, ինչպես նաև գերմաներենի կիրառումը տարբեր բնագավառներում: Սույն հոդվածում ներկայացվում է, թե ինչպես աշխատել տեքստի, վրա, ինչպես կատարել նախադասությունների քերականական վերլուծություն, և ինչպես ճշգրիտ թարգմանել ու խմբագրել մասնագիտական տեքստերը:

Հիմնաբառեր. *լեզվի առանձնահատկություն, շարադասություն, տեղեկատվական գրականություն, հիմնությունների զարգացում, քերականական վերլուծություն, նախադասության անդամներ, բառացի թարգմանություն, քերականական նորմեր:*

Համարժեք թարգմանությունը գերմաներեն նախադասության բովանդակության հնարավորինս ճշգրիտ վե-

րարտադրությունն է հայերենով: Յուրաքանչյուր լեզվի համար հատկանշական են իր առանձնահատկությունները՝ նախադասությունների կառուցման գործընթացում: Բառերի շարադասությունն ու միևնույն մտքի ձևակերպումը գերմաներեն և հայերեն լեզուներում շատ հաճախ չեն համընկնում, այդ պատճառով պետք չէ թարգմանել բառացի՝ կուրորեն հետևելով գերմաներեն նախադասության բառերի շարադասությունը: Եթե թարգմանվող նախադասության բառերի դասավորվածությունը վերադասավորենք մայրենի լեզվի կառուցվածքին ու ոճի պահանջներին համապատասխան, ապա թարգմանությունն ավելի պարզ ու բարեհունչ կլինի: Հարկավոր է նաև խուսափել մյուս ծայրահեղությունից՝ նախադասության (տեքստի) թարգմանությունը հայերենում ազատ վերաշարադրանքով փոխարինելուց: Աշխատանքի այս տեսակը դասվում է կոնսպեկտներ ու անոտացիաներ կազմելու վերաբերյալ վարժություններին:

Մինչ թարգմանության անցնելը, հարկավոր է սկզբում կարդալ տեքստը (հոդվածը) ամբողջությամբ՝ հասկանալու համար բովանդակությունը, ինչպես նաև եզրակացություն անելու, թե արդյո՞ք անհրաժեշտ է ծանոթանալ լրացուցիչ տեղեկատվական գրականության կամ օգտվել հատուկ (մասնագիտական) բառարաններից: Հայտնի է, որ մի լեզվից մյուսը կատարվող ցանկացած թարգմանություն հնարավոր չէ առանց թարգմանվող հատվածի ուշադիր ու մանրակրկիտ քերականական վերլուծության: Թարգմանությունն ու քերականական վերլուծությունն անբաժանելի

են: Նման վերլուծության հստությունների գարգացումը հեշտացնում է օտարալեզու տեքստի ընկալումը:

Այս վերլուծությունը սկսվում է հիմնական իմաստային ծանրությունը կրող նախադասության գլխավոր անդամներն առանձնացնելուց: Պարզ նախադասության համար հարկավոր է, նախ և առաջ, սահմանել ու բացահայտել ենթական ու ստորոգյալը: Ենթական առանձնացնելիս պետք է հասկանալ, որ այն միշտ դրվում է ուղղական հոլովով ու հետևաբար դրանից առաջ որևէ նախդիր դրվել չի կարող: Կարևոր է իմանալ, որ ենթակայի հետ հաճախ առկա են լինում մեկ կամ մի քանի որոշիչներ, որոնք դրա հետ մեկտեղ կազմում են միասնական, անբաժանելի իմաստային խումբ՝ ենթակայի խումբը: Գերմաներում գոյականը սովորաբար դրվում է ստորոգյալից առաջ կամ հետո: Ստորոգյալն առանձնացնելիս հարկավոր է հիշել, որ այն կարող է արտահայտված լինել բայի բարդ ձևով: Ստորոգյալն հարկավոր է փնտրել նախադասության երկրորդ (եթե պարզ է, այսինքն կազմված է մեկ բայից) և վերջին տեղում (եթե ստորոգյալը բարդ է)՝ ստորակետից կամ *und* շաղկապից առաջ:

Պարզ նախադասության վերլուծություն

1. Գտնում ու վերլուծության են ենթարկում ստորոգյալն ու ենթական:
2. Սահմանում են նախադասության երկրորդական անդամները:

Վերլուծությունն առավել նպատակահարմար է սկսել ստորոգյալից՝ սահմանելով նրա դեմքը, թիվը, ժամանակը, սեռը: Այնուհետև վերլուծում են ենթական: Հարկավոր է որոշել, թե խոսքի ինչ մասով է արտահայտված ենթական, իսկ հետո սահմանել դրա սեռն ու թիվը: Նախադասության գլխավոր անդամներից հետո վերլուծում են երկրորդական անդամները, որոնք կարող են տեղակայված լինել տարբեր կերպ՝ կախված նախադասության մեջ բառերի ընդհանուր շարադասությունից: Այնուհետև առանձնացվում է ենթակայի ու ստորոգյալի խումբը: Չպետք է մոռանալ, որ ենթակայի խմբի մեջ է մտնում ինքը ենթական՝ իրեն վերաբերող լրացումներով ու պարագաներով: Երբ առանձին տարրերի քերականական վերլուծությունն ավարտվում է, դրանց թարգմանությունն ընդհանրացվում է, այսինքն կազմվում է նախադասություն:

Օր. *Am Abend besucht sie die kranke Freundin.*

Տվյալ նախադասության ստորոգյալը պատասխանում է *Ի՞նչ է անում ենթական*

(Was macht das Subjekt?) հարցին, պատասխանն է *besucht*, ստորոգյալի *t* վերջածանցը մեզ հուշում է, որ այն արտահայտում է երրորդ դեմք, եզակի թիվ, ներկա ժամանակ, ներգործական սեռ: Այժմ կարող ենք հարցնել *besucht n՞իլ (wer?)՝ sie*, ենթական արտահայտված է դերանունով, իզական սեռի, երրորդ դեմքի: Գլխավոր անդամների վերլուծությունից հետո միայն կարելի է անցնել նախադասության մյուս անդամների վերլուծությանը:

Բարդ նախադասության վերլուծություն

Սկզբում սահմանվում է, թե ինչպիսի նախադասություն է դա. բարդ համադասական, թե՞ բարդ ստորադասական: Դա կարելի է սահմանել՝

- ըստ շաղկապների (համադասական կամ ստորադասական),
- ըստ բառերի շարադասության:

ա) Երկրորդական նախադասության մեջ ստորոգյալը դրվում է նախադասության վերջում:

Օր.՝ Sie bekam, {was sie wünschte.}

բ) Գլխավոր նախադասության մեջ, որը երկրորդական նախադասությունից հետո է, ստորոգյալը դրվում է ստորակետից անմիջապես հետո:

Օր.՝ Wenn ich Zeit habe, {spiele ich Klavier.}

գ) Բարդ համադասականի առանձին նախադասություններում բառերի դասավորվածությունն առավել հաճախ նույնական է պարզ պատմողական նախադասությանը:

Օր.՝ {Sie wollte den Dekan sprechen}, {aber er war nicht da.}

Բարդ համադասական նախադասության թարգմանությունը սկսվում է դրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր նախադասության առանձին թարգմանությունից: Բարդ ստորադասական նախադասության թարգմանությունը հարկավոր է սկսել գլխավոր նախադասությունից՝ այն դիտարկելով որպես պարզ նախադասություն: Այնուհետև գտնում են երկրորդական նախադասությունը, սահմանում

են դրանց տեսակն ու թարգմանում՝ որպես պարզ նախադասություն: Ավարտելով բարդ նախադասության առանձին մասերի թարգմանությունը՝ այն միացվում է մեկ ամբողջական նախադասության՝ հետևելով հայերենի կանոններին:

Մասնագիտական տեքստերի թարգմանության վերաբերյալ

Տեխնիկական գրականության թարգմանությունը շատ դժվարություններ է պարունակում: Նախ գերմաներենում առկա են միայն այս լեզվին բնորոշ քերականական երևույթներ, որոնք բարդություններ են առաջացնում տեքստերը գերմաներենից հայերեն թարգմանելու ժամանակ: Ինչպես նաև տեխնիկական գրականության գերմաներեն լեզուն, էականորեն տարբերվում է գրական ու խոսակցական լեզվից: Այն բարդանում է դերբայական դարձվածքներով, բարդ նախադասությունների առկայությամբ, ընդլայնված որոշիչ երկրորդական նախադասություններով: Մեծ բարդություն է առաջացնում նաև նոր մասնագիտական հասկացությունների ու դրանց համապատասխան տերմինների կիրառումը: Սկսելով տեխնիկական գրականության թարգմանությունը, նախ և առաջ, հարկավոր է հիշել, որ թարգմանության որակը կախված է սովորողների լեզվական ու ընդհանուր տեխնիկական պատրաստվածության մակարդակից:

Մասնագիտական տեքստեր թարգմանելու համար պետք է իմանալ.

1. լեզուն, որից թարգմանում ես,
2. լեզուն, որով թարգմանում ես,
3. առարկան, որի մասին խոսվում է բնօրինակում:

Տեխնիկական թարգմանությունը բարդ ստեղծագործական գործընթաց է, որի նպատակն է բնօրինակի աղբյուրում պարունակվող տեխնիկական տեղեկատվության փոխանցումը լեզվական այն միջոցներով, որին տիրապետում է տեղեկատվության սպառողը: Թարգմանության որակն ունի շատ մեծ նշանակություն: Ոչ ճիշտ թարգմանությունը կարող է հանգեցնել աշխատանքային թերությունների ու արտադրական մեծ կորուստների: Թարգմանության ճշգրտությունը տեխնիկական տեքստի թարգմանությանը ներկայացվող հիմնական պահանջն է: Ճշգրտություն ասելով պետք է հասկանալ հայերեն տեխնիկական լեզվի նորմերին համպատասխանող բնօրինակի նյութի շարադրման հակիրճությունը, արտահայտչականությունը, տրամաբանական հաջորդականությունը, օբյեկտիվությունը, ամբողջականությունը: Պետք չէ շփոթել, ճշգրիտ ու բառացի հսկացությունները: Բառացի թարգմանությունը հանգեցնում է գերմաներեն բառի փոխարեն հայերենի մեխանիկական տեղադրմանը, ինչպես նաև գերմաներեն նախադասության կառուցվածքի կույր պահպանմանը, ինչը բերում է անիմաստության ու ապաուղղորդվածության:

Տեխնիկական թարգմանությունը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

- Ընդհանրացված տեղեկատվության առկայություն (այս կամ այն առարկան կամ հասկացությունը նշելու համար ողջ տեքստում պետք է կիրառվի միևնույն տերմինը, հոմանիշ տերմինների օգտագործումը չի թույլատրվում).
- Թարգմանության լեզվի քերականական նորմերի պահպանում.
- ձևակերպման կանոնների համապատասխանություն (պարբերություններ, տողերի միջև հեռավորություններ և այլն):

Տեքստի վերնագիրը, որպես կանոն, արտացոլում է տվյալ տեքստի հիմնական թեման: Եթե վերնագրի թարգմանությունը բարդություններ է առաջացնում, ապա դա կարելի է անել տեքստն ամբողջությամբ թարգմանելուց հետո: Մինչ թարգմանությանն անցնելը, հարկավոր է տեքստն ուշադիր կարդալ բնօրինակով: Ընթերցելու ընթացքում կարելի է մատիտով նշել անհասկանալի ու կասկածելի հատվածները, ինչպես նաև անձանոթ կամ բառարաններում չամրագրված տերմինները: Դրանք ճշտելու համար, հարկավոր է դիմել մասնագետի, օգտվել համապատասխան ուղեցույցերից ու տեխնիկական բառարաններից, դիմել մասնագիտական գրականության կամ փորձել անձամբ բացահայտել տերմինների նշանակությունը: Նախնական թարգմանությունը կարող է գրեթե բառացի լի-

նել, ինչը հեշտացնում է տեքստի հիմնական իմաստի ընկալումը: Այնուհետև ընտրվում են այնպիսի բառեր ու բառակապակցություններ, որոնք առավելագույն հստակությամբ են փոխանցում թարգմանվող նյութի իմաստը, նախադասության մեջ սահմանվում է բառերի քերականական կապը: Եթե կատարված աշխատանքից հետո նախադասության իմաստը հասկանալի է, ապա այն խմբագրում են, կարդում են նախորդ հատվածի հետ ու համոզվելով, որ իմաստային կապը ճիշտ է, անցում են կատարում մյուս նախադասությանը: Աշխատանքն ավարտելուց հետո անհրաժեշտ է ուշադիր կարդալ ամբողջ թարգմանությունը, կատարել ռճական ուղղումներ, վերացնել բացթողումները, սխալ տպագրված տառերը, վրիպակները, ինչպես նաև վերջնականապես համակարգել տերմինաբանությունը: Համոզվելով, որ տեքստն ամբողջությամբ փոխանցում է գերմաներեն տեքստի իմաստն (թարգմանությունն ադեկվատ է) ու համապատասխանում է հայերեն տեխնիկական լեզվի նորմերին, աշխատանքը կարելի է ավարտված համարել:

Գրականության ցանկ

1. Хайт, Ф.С. (1978) *Пособие по технике перевода специальных текстов с немецкого языка на русский*. пособие/ Ф.С. Хайт. – М.: Высшая школа.
2. Коржавин, А.В. (1988) *Пособие по переводу для*

технических вузов. – М.: Высшая школа.

3. Алексеева, И.С. (2001) *Профессиональный тренинг переводчика.*- Союз, Санкт-Петербург.
4. Умберто Эко (2006) *Сказать почти тоже самое. Опыты о переводе,* Санкт-Петербург.
5. Krämer, S. (2001) *Sprache, Sprechakt, Kommunikation,* Suhrkamp.

KRISTINA SOGHOMONYAN – Grammaticische Analyse des Satzes bei der Übersetzung der technischen Texte - Ziel der Fachdisziplin „Deutsche Sprache“ ist die weitere Entwicklung der fremdsprachlichen kommunikativen Kompetenz, sowie die Entwicklung und Erziehung der Fähigkeit und Bereitschaft zum selbstständigen Erlernen der deutschen Sprache, die Verwendung der deutschen Sprache in anderen Wissensbereichen. Der Artikel beschreibt, wie man an dem Text und seiner Übersetzung arbeiten, wie man einfache und komplexe Sätze analysieren und wie man technische Texte genau übersetzen kann.

Schlüsselwörter: Sprachfunktion, Wortfolge, Sekundärliteratur, Kompetenzentwicklung, grammatische Analyse, Hauptglieder und Nebenglieder des Satzes, wortwörtliche Übersetzung, grammatische Kriterien.

КРИСТИНА СОГОМОНЯН - Грамматический анализ предложения в процессе технического перевода - Предмет

изучения немецкого языка имеет две основные цели: первое способность общения на иностранном языке, второе формирование и воспитание способности самостоятельного изучения немецкого языка, а также применение языка в различных областях. В данной статье представлено как работать над текстом, как правильно проводить грамматический разбор предложений, и как точно перевести и отредактировать тексты по специальностям.

Ключевые слова: *особенности языка, порядок слов, информативная литература, развитие навыков, грамматический анализ, члены предложения, буквальный перевод, грамматические нормы.*